

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՆ ԱՅՑԵԼԵԼ Է ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏ

13.11.2015 15:45



Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատում հյուրընկալվել էր Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարար Արփինե Հովհաննիսյանը:

Արդարադատության նախարարը նշել է, որ երկու կառույցների միջև համագործակցությունը խորացնելու նպատակով առաջիկայում նոր հուշագիր կստորագվի, որի արդյունքում առկա փոխգործակցությունը կմտնի որակապես նոր փուլ: Նախարարն ընդգծել է, որ փաստաբանական համայնքը Հայաստանի ամենակայացած մասնագիտական կառույցներից մեկն է: **«Փաստաբանների պալատն այսօր հայտ է ներկայացում լրջագույն դերակատարում ստանձնելու ՀՀ-ում մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության երաշխավորման գործում»**, - ասել է արդարադատության նախարարը:

Արա Զոհրաբյանը ողջունել է նախարարին և կարևորել երկկողմ համագործակցությունը և հայտնել, որ Արդարադատության նախարարության հետ համագործակցությունը սկսվել է դեռևս 2005թ-ից:

Նրա խոսքով, փաստաբանության մասին օրենքը լայն հնարավորություն է տալիս փաստաբաններին զարգացնելու այս ինստիտուտը:

‘Տարածաշրջանում լավագույն տեղում ենք գտնվում: Վերջերս էլ առիթ ունեցանք հանդիպել ԱՊՀ երկրների Փաստաբանական համայնքների ներկայացուցիչների հետ և պետք է փաստել, որ այդ երկրների Փաստաբանական համայնքները կառուցվածքային առումով մեր երկրի Փաստաբանական ինստիտուտից վերցնելու շատ բան ունեն: Մասնավորապես, այդ երկրներում չկան Փաստաբանական դպրոցներ, Հանրային պաշտպանի գրասենյակներ’, - նշել է Արա Զոհրաբյանը:

Խոսելով փաստաբանի անկախության մասին՝ Արա Զոհրաբյանը հայտնել է Փաստաբանների պալատի զարգացման մեջ շատ կարևոր դեր ունի փաստաբանը՝ Փաստաբանների պալատի շենքը, Փաստաբանների պալատի կառավարման մարմինները որևէ բան չեն կարող անել, եթե դրսում «կռիվ տվող» փաստաբանը ինքը չկարողանա անկախ լինել և չկարողանա բարձրացնել փաստաբանի հեղինակությունը: Այդ իսկ պատճառով

ՓՊ ղեկավարի գնահատմամբ, բոլոր դրական
զարգացումները «մեր փաստաբանների
ծեռքերումներն են»:

Պալատի նախագահի խոսքով Արդարադատության
նախարարությունը ներկայացված է թե՛
Փաստաբանների պալատի որակավորման
հանձնաժողովի կազմում, թե՛ Փաստաբանական
դպրոցի կառավարման խորհրդում:

Արա Զոհրաբյանը հայտնել է, որ նախարարություն
հետ նախկինում եղել են կնճռոտ էջեր, բայց դրանք
պատվով հաղթահարել ենք և երկու կառույցները
շարունակում են զարգացնել համագործակցությունը:


Այնուհետև հյուրերը շրջայց են կատարել Հանրային
պաշտպանի գրասենյակում ծանոթացել հանրային
պաշտպանների աշխատանքային գրաֆիկին և
աշխատանքային պայմաններին:

ՀՀ Փաստաբանական դպրոցում Արդարադատության
նախարարը մասնակցել է Դատական նիստերի
դահլիճի բացման արարողությանը և ներկա գտնվել
Դպրոցի ունկնդիրների կողմից կազմակերպված
դատախաղին: Նախարարը կարևորել է դատական
նիստերի դահլիճի բացումն ու ընդգծել, որ դրա
արդյունքում Փաստաբանական դպրոցի ունկնդիրն
ուսուցման ընթացքում հնարավորություն կստանա
ամբողջությամբ տիրապետելու դատական
գործընթացի նրբություններին:

Դատական նիստերի դահլիճի կահավորումն
իրականացվել է ֆրանսահայ բարերար Ռայմոնդ
Եզեգուելյանի ֆինանսավորմամբ:









Վերադառնալ \$(window).load(function(){ if(typeof \$(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt(\$(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })